Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 889-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական ռազմականացված կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից մարտական և ծառայողական զենքի (այսուհետ՝ զենք) վաճառքի, փոխանցման, ձեռքբերման, հավաքածուներ կազմելու և դրանք ցուցադրելու, հաշվառելու, պահպանելու, կրելու, տեղափոխելու (փոխադրելու), ոչնչացնելու, Հայաստանի Հանրապետության տարածք ներկրելու և Հայաստանի Հանրապետությունից արտահանելու (այսուհետ համապատասխանաբար՝ ներկրում և արտահանում) հետ կապված հարաբերությունները:

2. ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԸ, ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

2. Կազմակերպություններն իրավունք ունեն՝

1) իրենց սպառազինության մեջ գտնվող մարտական զենքը և դրա փամփուշտները փոխանցելու այլ պետական ռազմականացված կազմակերպությունների.

2) ծառայողական զենքը վաճառելու ծառայողական զենքի արտադրության կամ առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց.

3) առանց թույլտվության ձեռք բերելու զենքի վերաբերյալ տեղեկությունների պետական կադաստրում գրանցված ծառայողական զենք՝ այն իրավաբանական անձանցից, որոնք օրենքով սահմանված կարգով զբաղվում են զենքի արտադրությամբ կամ առևտրով, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող զենք:

3. Զենքի փոխանցումը, վաճառքը և ձեռքբերումը պետք է ձևակերպվեն սահմանված ձևի փաստաթղթերով, որոնց ցանկը, ձևը և վարման կարգը սահմանվում են համապատասխան կազմակերպության ղեկավարի հրամանով:

4. Կազմակերպություններում 20 և ավելի տարի զինվորական ծառայության ստաժ և առնվազն «գնդապետ» զինվորական կոչումով գործող և պահեստազորի սպաներն իրավունք ունեն զենք ձեռք բերելու թույլտվության առկայության դեպքում ձեռք բերել մեկ միավոր ծառայողական զենք՝ պահելու և կրելու թույլտվությամբ, որն օգտագործելու իրավունք ունեն միայն լիցենզավորված հրաձգարանների տարածքում: Ձեռք բերված զենքը և ռազմամթերքը ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում (այսուհետ՝ ոստիկանություն):

5. Կազմակերպությունների կողմից զենք ձեռք է բերվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական ստուգողական կրակոց իրականացնելուց հետո: Առանց նախնական ստուգողական կրակոց իրականացնելու թույլատրվում է զենք ձեռք բերել միայն այլ կազմակերպություններից: Կազմակերպությունների կողմից ձեռք բերված զենքը կարող է ներկայացվել հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան՝ նախնական ստուգողական կրակոց իրականացնելու և արդյունքները գրանցելու նպատակով:

6. Կազմակերպությունների ղեկավարների որոշմամբ ստուգողական կրակոցները կարող են իրականացվել նաև զենքի շրջանառության այլ փուլերի ընթացքում:

7. Զենքից նախնական ստուգողական կրակոցներ իրականացնելու տեխնիկական պահանջները, դրանց փաստաթղթավորումը, հաշվառելու, պահելու և գնդակների ու պարկուճների՝ հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարան փոխանցելու կարգը, ինչպես նաև օգտագործված գնդակների և պարկուճների դուրսգրման ու ոչնչացման կարգը հաստատում է ներքին գործերի բնագավառում լիազոր մարմնի ղեկավարը՝ համաձայնեցնելով մյուս կազմակերպությունների հետ:

3. ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՑՈՒՑԱԴՐԵԼԸ

8. Կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել զենքի թանգարաններ, ինչպես նաև կազմել և ցուցադրել զենքի հավաքածուներ:

9. Կազմակերպություններն օրենքով սահմանված կարգով իրավունք ունեն հավաքածուներ կազմելու և ցուցադրելու համար փոխանցել (վաճառել) այն զենքը, որի մասին տեղեկությունները չեն կազմում պետական գաղտնիք:

10. Կազմակերպությունների թանգարաններ զենք կարող է փոխանցվել՝ առանց մալելու կամ ուսումնական վիճակի բերելու:

4. ԶԵՆՔԸ ՀԱՇՎԱՌԵԼԸ, ՊԱՀՊԱՆԵԼԸ ԵՎ ԿՐԵԼԸ

11. Կազմակերպությունները պարտավոր են իրականացնել զենքի հաշվառում՝ համապատասխան կազմակերպության ղեկավարի սահմանած կարգով:

12. Կազմակերպություններում զենք պահելն իրականացվում է միայն այդ նպատակի համար հատուկ նախատեսված տարածքներում, որոնք ապահովում են զենքի պահպանության անվտանգությունը և բացառում կողմնակի անձանց մուտքը:

13. Զենքը պահելու համար տարածքները սարքավորվում են պահպանության և հրշեջ անվտանգության տեխնիկական միջոցներով:

14. Ըստ զենքի նշանակության՝ դրանք պահելու պահանջները սահմանվում են կազմակերպության ղեկավարի հրամանով:

15. Կազմակերպությունների զինծառայողները և աշխատողները պարտավոր են զենքի հափշտակվելու կամ կորսվելու դեպքերում ներկայացնել զեկուցագիր անմիջական ղեկավարներին:

16. Հափշտակված կամ կորած զենքը կազմակերպություններում հաշվառումից դուրս է գրվում կազմակերպության ղեկավարի հրամանով սահմանված կարգով՝ ոստիկանությունից հափշտակված կամ կորած զենքը հաշվառման վերցնելու մասին տեղեկանքն ստանալուց հետո:

17. Հափշտակված կամ կորած զենքը՝ կազմակերպություն վերադարձնելու դեպքում ծառայողները կամ աշխատողները պարտավոր են անմիջապես այդ

մասին զեկուցագիր ներկայացնել իրենց անմիջական ղեկավարին և հայտնել այն պետական մարմիններին, որոնք իրազեկվել էին զենքի հափշտակման կամ կորստի մասին:

18. Հափշտակված կամ կորած զենքը կազմակերպություն վերադարձնելու դեպքում այն վերագրանցվում է տվյալ կազմակերպության ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

5. ԶԵՆՔ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ (ՓՈԽԱԴՐԵԼԸ)

19. Զենքի տեղափոխումը (փոխադրումը) իրականացվում է տրանսպորտային միջոցներով:

20. Զենքը տեղափոխվում (փոխադրվում) է լիցքաթափված վիճակում, առանձնացված պահեստատուփով, դրված պահպանակի վրա՝ ծածկաշապիկով կամ պատյանով կամ տեղափոխման համար նախատեսված գործարանային այլ տարայով, որը պետք է կնքվի կամ կապարակնքվի:

21. Զենք տեղափոխող տրանսպորտային միջոցի բացված լինելու նշանների հայտնաբերման, տարայի վնասման, կնիքի կամ կապարակնիքի դրոշմվածքի խախտման դեպքում ուղեկցող խմբի ղեկավարը պարտավոր է դրա մասին անմիջապես հայտնել անմիջական ղեկավարին:

6. ԶԵՆՔԸ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ

22. Եթե կազմակերպությունների սպառազինության մեջ գտնվող զենքի առանձին տեսակներ հանվել են արտադրությունից, կամ կարող են փոխարինվել մարդու կյանքի կամ առողջության համար առավել նվազ վտանգավոր և արդյունավետ համանման այլ տեսակով, կամ այլևս օգտագործման համար պիտանի չեն, կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) 3 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացություն է ներկայացնում կազմակերպության ղեկավարին՝ տվյալ տեսակը սպառազինությունից հանելու մասին:

23. Սպառազինությունից հանված, ինչպես նաև օգտագործման ոչ պիտանի զենքը դուրս է գրվում հանձնաժողովի կողմից կազմված եզրակացության հիման վրա:

24. Եթե կազմակերպությունը տեխնիկապես ոչ պիտանի, ինքնաշեն կամ ձևափոխված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքը չի ներառում զենքի հավաքածուում, ապա այն ենթակա է ոչնչացման:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԶԵՆՔ ՆԵՐԿՐԵԼԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼԸ

25. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպությունների կողմից զենք ներկրվում և արտահանվում է՝

1) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված դեպքերում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ կազմակերպության հրավերի կամ օտարերկրյա ռազմականացված կազմակերպության հայտի հիման վրա:

26. Պայմանագրերով, հրավերով կամ հայտով օտարերկրյա ռազմականացված կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք զենք ներկրվելու դեպքում՝ հրավերը ձևակերպած, պայմանագիրն ստորագրած, հայտն ստացած կազմակերպությունը զենք ներկրելու թույլտվություն ստանալու համար առնվազն մեկ ամիս առաջ առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ նշելով զենքի ներկրման նպատակը, ժամկետը, ներկրվող զենքի և փամփուշտների տեսակն ու քանակը, զենքի պահպանման վայրը, զենքի ներկրման, տեղափոխման (փոխադրման) ու պահպանման վերաբերյալ համապատասխան հանձնարարականներն իրավասու պետական կառավարման լիազորված մարմիններին:

27. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կամ նրա ներկայացուցիչների կողմից ներկրվող զենքը Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետում մաքսային մարմնի և Հայաստանի Հանրապետության

իրավասու կազմակերպության պատասխանատու ներկայացուցչի կողմից ենթարկվում է մաքսային զննության, որի մասին կազմվում է արձանագրություն և համարային հաշվառման ցուցակ՝ 5 օրինակից, որից մեկը մնում է մաքսային մարմնում, մեկական օրինակ տրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը և զենքը ներկրող օտարերկրյա ռազմականացված կազմակերպության ներկայացուցչին, որը հետագայում զենքն արտահանելիս այն ներկայացնում է մաքսային սահմանային անցակետ:

28. Եթե արտահանման ընթացքում արտահանվող զենքը չի համապատասխանում համարային հաշվառման ցուցակին, ապա զենքի ամբողջ խմբաքանակի արտահանումը կասեցվում է՝ մինչև հանգամանքների պարզումը:

29. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության ներկայացուցչի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում զենք պահելը, կրելը կամ օգտագործելն իրականացվում են Հայաստանի Հանրապետության իրավասու կազմակերպության թույլտվությամբ և հսկողությամբ:

30. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կողմից ներկրված զենքը պահվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված իրավասու կազմակերպությունում:

31. Օտարերկրյա ռազմականացված կազմակերպության կողմից պայմանագրով, հրավերով կամ հայտով ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում պատասխանատու կազմակերպությունը դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ խնդիրը դիվանագիտական ճանապարհով լուծելու համար:

32. Պայմանագրով, հրավերով կամ հայտով կազմակերպությունների զինծառայողների կամ աշխատողների կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով զենքը արտահանվում և ներկրվում է գործուղման վկայականի հիման վրա, որում նշվում են զենքի մոդելը, համարը և փամփուշտների թիվը:

33. Գործողման վկայականը և դրա պատճենը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության մաքսային մարմին, որտեղ պատճենը բնագրի հետ համեմատվելուց հետո վավերացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ կնքելու միջոցով, և կցվում է համապատասխան մաքսային հայտարարագրին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ